

ՏԱՃԿԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ՈՌԻՄ ՏԱՃԿԱԿԱՆ  
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՆԹԱՑՔՈՒՄ\*)

Բ.

Ոռւս-Տաճկական պատերազմի պատճառով սահմանամերձ հայերի դրութիւնը հետզհետէ անտանելի դարձաւ, իսկ երկրի ներսի տաճկահայերի դրութիւնը աւելի քան սոսկալի էին՝ շնորհիւ Տաճիկ կառավարութեան ձնշումների։ Մի կողմից Տաճիկ կառավարութիւնը համարեա փոքր ինչ աշխատանքի ընդունակ տղամարդկանց պատերազմի դաշտն էր քշում, և միւս կողմից պատերազմի պատճառով բոլոր հայ գիւղերը թալանում, տանելով բոլոր ուտեստի պաշարը և անասունների կերը, փոխարէնը լոկ խոստումներ անելով՝ որ իրը պէտք է վերադարձնի վճարը։ Պատերազմի պատճառով Սարիղամիշի կողմերից, Քեօֆրիքոյի ուղղութեամբ, Արդուինի, Արդահանի, Օլժիի և շրջակայ գիւղերի հայ ազգաբնակութիւնը՝ յանկարծակի գալով, համարեա թողնում են ամեն բան և իրենց կեանքը փրկելու համար փախչում են կովկասի այլ ապահով քաղաքները։ Վեհափառ Հայրապետն, տեսնելով իւր զաւակների թշուառ դրութիւնը, բարեհաճեց նոյեմբերի 7-ին № 1719 գրութեամբ դիմել կովկասի Տ. Փոխարքային և խնդրել թոյլտւութիւն ժողովարարութեան՝ որ կարողանայ տեղական մարմինների միջոցով օգնութեան հասնել փախստական հայ թշուառներին։ Ժողովարարութեան թոյլտւութիւնը ստանալով՝ Վեհափառ Հայրապետն սրբատառ կոնդակներով, յանուն թեմակալ Առաջնորդների, պատուիրեց շուտով կազմակերպել ամեն տեղ «Եղբայրական օգնութեան Յանձնաժողովներ», նուիրատւութիւններ ժողովել փախստական հայերին պատսպարելու և կերակրելու։ Մինչ հազիւ հնարաւորութիւն էին փնտում պատսպարելու և կերակրելու

\*) Տես «Արարատ» Փետրուար-Մարտ էջ 138—149.

Սարիղամիշի կողմի փախստական հայերին՝ դեկտեմբերի 20—22 լուր ստացուեց՝ որ Ռուս զօրքի նահանջի պատճառով Ալաշկերտի հովտի տմբողջ հայութիւնը, Ապլմաստի, Խոյի և Թավրիզի հայերը փախչում և գալիս են դէպի Երևանեան նահանջը. Կարիքը չափազանց մեծ էր, անհրաժեշտ էր շուտափոյթ կազմակերպել ո. Էջմիածնում, Երևանում, Հին Նախիջևանում «Եղբայրական օգնութեան» գործը: Անմիջապէս Վեհափառ Հայրապետի հրամանով Դիւանը հեռազբներով դիմեց Կովկասի և Ռուսաստանի հայ ժողովրդին, Խնդրելով շուտափոյթ դրամական օգնութիւն, որպէսզի հնարաւոր լինի տամնեալ հազարաւոր թշուառ հայ փախստականներին կերակրել: Վեհափառի կոնդակով\*), դեկտ. 28 Ն 1900, ո. Էջմիածնում կազմուեց «Եղբայրական Օգնութեան Յանձնաժողով» հետևեալ միաբաններից, Տ. Տ. Եփրեմ, Բագրատ, Մատթէոս Եպիսկոպոսներ և Տ. Տ. Գարեգին, Բարգէն, Վրթանէս վարդապետներ:

Այս Յանձնաժողովին Վեհափառը յիշեալ կոնդակով պատուիրեց շուտով խնամել և բժշկական օգնութիւն հասցնել դժբախտ փախստականներին, մանրամասն տեղեկութիւններ ժողովել նրանց դրութեան մասին, բանակցել միւս քաղաքների «Եղբայրական օգնութեան Յանձնաժողովների» հետ գաղթականների օգնութեան դործը աւելի կանոնաւորելու և օգտակար դարձնելու և այն: Նախ քանի գաղթականների գալը՝ Վեհափառի հրամանով Երևանի—փոխ-թեմակալ Տ. Խորէն Եպիսկոպոսը գնաց Իգդիր, կազմակերպեց այնտեղ «Եղբայրական օգնութեան Յանձնաժողով» կարգադրութիւններ անելով ընդունել և խնամել ելող գաղթականներին:

Երբ փախստական—գաղթական տաճկահայերի հոսանքը սկսուեց՝ Վեհափառի հրամանով Իգդիր ուղարկուեց Տ. Գարեգին վարդապետը՝ տեղական Յանձնաժողովի հետ ընդունելու և պատսպարելու թշուառ գաղթականներին և կազմակերպելու նրանց փոխադրութեան դործը, իսկ Տ. Ա-

\*.) Տես «Արարատ» Յունուարի համարը 1915 թ.

ըիստակէս վարդապետն էլ գնաց Մարդարա դիւղը՝ Արաքսի եզերը, այնտեղ մնունդ մատակարարելու եկող գաղթաւկաններին և ճանապարհելու ո. Էջմիածին. իրրե օգնականներ Մարդարա գնացին Մարդարապատի դործակալն և ձեւմարանի ուսանողները:

Դեկտ. 26-ին ո. Էջմիածին հասաւ գաղթականների մեծ հոսանքը՝ Գրիչն անզօր է նկարագրել այն պրտաճմլիկ տեսարանը՝ որ պատկերանում էր մեր տուած, առանց արտասուքի չէր կարելի տեսնել մեր թշուառ եղբայրներին ու քոյրերին: Թէ ճանապարհին ինչ նեղութիւններ են կրել և ինչպէս են գաղթել՝ Կարնոյ շրջանի վարժարանաց Տհօրէն Ա. Պապաջանիան արդէն նկարագրել է\*): Ճուրտը, քաղցը, յոզնածութիւնն, բարոյական տանջանքները միանգամայն ճնշել և կենդանի մեռածներ էին դարձրել թշուառ տաճկահայերին: Բառիս բուն նշանակութեամբ ընդարձակ էին խեղճերը և նոյն խսկ չէին կարողանում խօսել ու հասկանալ իրենց ուղղած հարցերը: Մայրը իւր երկու երեք օրուայ մեռած երեխային է շալակել բերել, չէ ուզում հաւատալ՝ որ նա մեռած է, յոյս ունի տաքացնելով վերստին կեանք տալ և կենդանացնել: Դժբախտ երեխաները կորցրել են իրենց ծնողներին, գուցէ և անդարձ, ամուսինն իւր կնոջ, ծնողներն իրենց դաւակներին՝ մի խօսքով զուլումի աշխարհից՝ են փախել և ով կարողացել է՝ իրեն աղատել է: Այս, այն աղաղակները, այն հեծկըլտոցը ու արտասունքները, որ թշուառ մայրերը թափում էին, երբ, տաք սենեակում փոքր ինչ տաքանալով, յիշում էին իրենց կորցրած դաւակներին ու ամուսիններին: Հետզհետէ թշուառ գաղթականները տեղաւորուեցին Մայր Աթոռի երկու ընդարձակ սեղանատներում, կից սենեակներում, վանքի աղարակում, զիւղի զպրոցական շէնքերում, Զօրանոցի սենեակներում: Յանձնաժողովի անդամները մի կողմից հաց էին մատակարարում, տաք կերակուր, թէյ տալիս և երկու երեք օր հանգստանալուց ու

\*.) Տես «Արարատ» Փետրուար-Մարտ 1915 թ. էջ 150—169.

տաք շորեր տալուց յետոյ՝ նրանց ճանապարհում էին էջմիածնի գաւառի հայաբնակ գիւղերը, Սարդարապատի կողմերը և Երևան։ Դեկտեմբերի 26-ից մինչև Յունուարի 10-ը գաղթականների հոսանքը չափազանց մեծ էր, իսկ հետզհետէ քիչ քիչ պակում է՝ սակայն մինչև Փետրուարի 20-ը համարեա չէ կտրուել գաղթականների հոսանքը, ամեն օր գալիս էին Վերջին օրերի գաղթականները աւելի իգդիրից և շրջակայքից էին, այդ կողմերը նսարաւոր չինելով մնալ՝ գալիս էին դէպի էջմիածնի կողմերը։ Մինչև Յունուարի 1-ը գաղթականների թիւը 7—8000 հասաւ։ Դեկտեմբերի 29-ից մինչև յունուարի 10-ը միջին թուռով օրական ս. էջմիածնում կիրակրում էին 6500—7000 հոգի, իսկ փախստական-գաղթականներ այդ ժամանակաշրջանում էջմիածնում եղել են մօտ 15000 հոգի։ Հետզհետէ գաղթականներին Յանձնաժողովը ուղարկեց շրջակայ գիւղերը և Երևան։ Էջմիածնում մնացին մօտ 1000 հոգի, որոնց խնամատարութեան հոգսն էլ շարունակում է մինչև այժմ։

Յանձնաժողովը գաղթականներին բժշկական օգնութիւն էր ցոյց տալիս Երևանից հրաւիրուած ամերիկական կրթութեամբ բժիշկ Օգսէնտ Տէր Յարութիւնեանի և տաճկական զօրքից գերուած հայ բժիշկներ պլ. Յովսէփեանի և Բլբուկեանի միջոցով։ Իսկ Փետրուարի 13-ին 25 մահճակալով գաղթականների համար յատուկ հիւանդանոց բացուեց՝ ղեկավարութեամբ բժիշկ Օգսէնտ Տէր Յարութիւնեանի, իսկ Բագուի Կուլտուրական Բնկերութեան ծախսով Երկրորդ հիւանդանոց ևս բացում է բժիշկ Թաշճեանի ղեկավարութեամբ։ Վաղարշապատի ծխական դըպուցի մանկավարժական ժողովի ջանքերով գաղթական երեխաններից 60—70 հոգի կէս օրից յետոյ գրագիտութիւն են սովորում։ Էջմիածնի Յանձնաժողովը սիրով հոգում է այդ երեխանների թէ դասական պիտոյքները և թէ հագուստն ու մնունդը։

Դիւղերն ուղարկուած գաղթականներին տեղական գիւղացիները, նախ քան էջմիածնի Յանձնաժողովի օգ-

Նութեան համնելը դրամով և ալիւրով, պահպանում էին իրենց միջոցներով և թշուառ փախստականներին պատսպարում իրենց տներում։ Այդ տեսակէտից մեծ է տեղական գիւղացիների արած օգնութիւնը իրենց խեղճ եղբայրներին ու քոյրերին։ Բայց որովհետեւ առանց այն էլ կարօտ գիւղացիները չէին կարող երկար ժամանակ օգնել գաղթականներին՝ էջմիածնի Յանձնաժողովի ջանքերով բոլոր գիւղերում Եղբայրական օգնութեան տեղական հոգաբարձուներ ընտրուեցին, որոնց միջոցով և օգնութեան գործը գաղթականներին, էջմիածնի Յանձնաժողովի կողմից, կանոնաւորուեց։

Դրամական օգնութիւնն էլ զանազան քաղաքներից, պէտք է ասել, գոհացուցիչ էր։ Վեհափառ Կաթուղիկոսի հայրական հեղինակաւոր կոչին ամեն հայաշատ քաղաքներից արձագանք տուին և ամեն տեղից շտապում էին իրենց բարոյական պարտքը կատարել ու դրամական օժանդակութիւն ուղարկել գաղթականների համար։ Այլ տեղերից, ինչպէս Մոսկուայի կանանց Ընկերութիւնից, ուղարկում էին պատրաստի հագուստներ գաղթականների համար։ Ուղարկեցին շաքար, թէյ, սապոն և հին շորեր։ Իրենց առատ նուիրաբերութեամբ աչքի էին ընկնում Մոսկուայի, Պետրոգրադի և Նոր-Նախիջևանի հայութիւնը՝ յանձին տեղական «Յանձնաժողովների Եղբայրական Օգնութեան»։ «Արարատ»ում հետզհետէ կը տպենք նուիրատուների ցուցակը և նուիրած գումարների հաշիւր։

Առանձին գնահատելի է Ռուս հասարակութեան և Ռուսաց մամուլի ջերմ վերաբերմունքը դէպի հայ թշուառ գաղթականները։ Մայրաքաղաքների և զանազան տեղերի Ռուս մամուլը առանձին յօդուածներ նուիրեց՝ դարձնելով թշուառ գաղթականների վրայ ընթերցողների ուշադրութիւնը։ Պետրոգրադում նախագահութեամբ քաղաքագլուխ կոմս Տօլստոյի կազմուեց մի յատուկ Յանձնաժողով՝ բաղկացած Մայրաքաղաքի յայտնի աչքի ընկնող գործիչներից։ Յանձնաժողովը հրատարակեց կոչ, որը բերում ենք

այստեղ, ծանօթացնելու մուս ականաւոր մարդկանց զգացումներին մեր հայ գաղթականների նկատմամբ:

«Հակաքարաւոր հայեր՝ ծերունիներ, կանայք և երեխաններ տանջւում են իրանց վաղեմի թշնամիների՝ թիւրքերի վրէժից, կողոպուտից և բռնութիւնից: Բռնի մահի ահարկու ուրուականը, բազմապիսի տանջանքները, լաւագոյն դէպքում լիակատար աւերածութիւնը՝ ստիպեց նրանց թիւրքաց արշաւանքի ժամանակ թողնել իրենց բնակավայրը, թոյլ չտալով վերցնել և տանել իրանց գոյքը: Մուրացիկներ և մերկ են դարձել նրանք և ոչ մի տեղից օգնութեան յոյս չունին: Նրանց ամուսինները և եղբայրները մասսամբ ընկել են թիւրքերի ձեռքով, մասամբ մտել են կամաւորների խմբերի շարքը և կուռում են բռնակալների դէմ:

«Մենք չենք կարող մեր օգնութիւնը փնտրող մեր եղբայրներին, դաժան պատերազմի անմեղ գոներին, մերժել:

«Մենք չպէտք է թոյլ տանք, որպէսզի կանայք, երեխանները և ծերերը, նին կուտուրական երիտոնեայ ժողովրդի որդինք, կործանումն սովից ու ցրտից:

«Մենք պարտաւոր ենք օգնել նրանց:

«Նրանց մերձաւոր ցեղակիցները արել են և անում են ամենը, ինչ կարող են: Բայց կարիքը մեծ է և աճում է իւրաքանչիւր օր: Ժամանակը չէ ներում: Պետրօզրադի քաղաքացիներ, ցոյց տուէք բարոյական և նիւթական աջակցութիւն մեր եղբայրներին:

«Բարձրացրէք նրանց ողին, թոյլ մի տաք, որ նրանց տանչուած սրտերի մէջ ապաստան գտնի յուսահատութիւնը, ջերմացրէք մրսողներին, հագցրէք մերկերին, կերակրեցէք քաղցածներին:

«Թող Մեծն Ռուսաստանը մի աւելորդ անգամ ապացուցի, որ իր սիրառատ և քնքոյշ սիրտը, որ բոլոր ժողովուրդներին, որոնք ապրում են իր սահմաններում, բերում է սէր և խաղաղութիւն, ուրախ և բարեկամական օգնութեան ձեռք է մեկնում նրանց, այս ծանր օրերին»:

Այս կոչի տակ ստորագրել են՝ Պետրօզրադի քաղաքագլուխ կոմս Ի. Ի. Տօլստոյ, Պետական Խորհրդի անդամներ՝ Ն. Ս. Տագանցեվ, Ա. Վ. Վասիլեվ, Ն. Ս. Աւգակօվ, Պետակ. Դումայի անդամներ՝ Ի. Ն. Եֆրեմով, Ե. Ն. Կովալեվսկի, Պ. Ն. Միւլիւկով, Ա. Ի. Շինգարեվ, ակադեմիկ՝ Ն. Ե. Մարր, պրոֆեսորներ՝ Մ. Ի. Բոստովեվ, Ա. Օ. Լիխաչեվ, Կ. Պոլսի ռուսական դեսպանատան առաջին թարգման Ա. Ա. Մանդէլշտամ, և ուրիշները:

Պետրոգրադի վերոյիշեալ պատկառելի Յանձնաժողովը  
Մարտի 7-ին, 8.ին և 9-ին աջակցութեամբ տեղական  
Հայկական Յանձնաժողովի կազմակերպեց Մայրաքաղաքում  
մի ընդարձակ ժողովարութիւն, և ինչպէս հաղորդում է  
«Մշակ»ի թղթակիցը\*) այդ երեք օրերը Պետրոգրադում  
իսկապէս Հայկական օւեր էին: Համարեա ամբողջ ռուս  
հասարակութիւնը այդ երեք օրուայ մէջ առանձին համա-  
կրութեամբ վերաբերուելով դէպի թշուառ հայ փախստա-  
կանները, ոչինչ չեն խնայել և իւրաքանչիւրն ըստ կարո-  
ղութեան մասնակցել է: Ժողովարութիւնից յետոյ գոյա-  
ցել է 77 հազար ռուբլի, որպիսի գումարը փոխադրուել է  
Վեհափառ Հայրապետի անունով, իսկ քաղաքային Դուման  
էլ փոխադրել է 47 հազար. նոյնպէս ուղարկել են մեծ  
քանակութեամբ հագուստեղին:

\*\*\*

\*

Եջմիածնի «Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կար-  
դագիր Յանձնաժողով» կամենալով այլ տեղերի գաղթու-  
կանների մասին տեղեկութիւններ ունենալ, բացի գրաւոր  
գեկուցումներ ստանալուց մի քանի տեղերից, Վեհափառի  
հրամանով ուղարկել է 8. Մատթէոս եպիսկոպոսին Հին  
Նախիջևան, իսկ 8. Բաբդէն վարդապետին էլ Իգդիր, որ-  
պէսպի անձամբ տեսնեն գաղթականների դրութիւնը, թէ  
ինչպէս են պահպանում տեղական Յանձնաժողովների  
կողմից: Երկուսն էլ վերադառնալով՝ իրենց մանրամասն  
գեկուցումներն են ներկայացրել Վեհափառ Հայրապետին:

\*\*\*

★

Փախստական-գաղթականներին գիւղերում խնամելու  
և կերակրելու գործի կազմակերպութիւնը կանոնաւորելու  
համար յունուարի 24-ին Նորին Վեհափառութեան հրա-

\*) Մշակ № 58:

մանով Վեհարանում կայացաւ ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովի նիստը, մասնակցութեամբ Երևանի թեմական Յանձնաժողովի ներկայացուցիչների։ Օրակարգի խնդիրներն էին՝

1. Գաղղթական-փախստականներին գիւղերում խնամելու և կերակրելու գործի կազմակերպութիւնը.

2. Վիճակագրութեան միաձև և միաժամանակ կաղմելու անհրաժեշտութիւնը և այս կարևոր գործի կազմակերպութիւնը։

3. Գաղղթականներին հագուստեղին և անկողին կանոնաւորապէս բաժանելու խնդիրը.

4. Ամենայն տեղ բժշկական օգնութիւն կազմակերպելու խնդիրը.

5. Գաղղթականների առողջապահական պայմանների, մաքրութեան և բաղանիքի խնդիրը.

6. Որբանոցներ և առհասարակ անտէր ու չքաւորերեխաններին խնամելու և ուսում տալու խնդիրը.

7. Աշխատանքի ընդունակների համար գործ և աշխատանք կազմակերպելը.

8. Տաճկա-Հայաստանի և Պարսկաստանի գաղղթական-փախստականների պսակուածների, ծնուածների և մեռածների համար յատուկ չափաբերական ունենալու խնդիրը.

9. Համագումարի կազմակերպութիւնը համաձայն Վեհափառ Հայրապետի 1914 թ. դեկտ. 28-ի ս. Կոնդակի Դ-րդ կէտի։ Վերոյիշեալ հարցերի նկատմամբ կայացան հետեւեալ որոշումները։

1. «Սկզբունքով ընդունելով, որ ցանկալի է իւրաքանչիւր գիւղում ընդհանուր կաթսայ ունենալ և կերակուր տալ գաղղթականներին, բայց ուշադրութեան առնելով տեղական պայմանները, դժուարութիւններն ու առաջանալիք թիւրիմացութիւններն, ժողովը յարմար համարեց տալ իւրաքանչիւր շնչին 2 ֆունտ թխած հաց և ուր այդ անհնար կը լինի, ալիւր շնչին  $1\frac{1}{2}$  ֆունտ։ Իսկ ապագայում եթէ թուերը, պայմաններն ու ծախքերի քանակը թոյլ տան՝ շաբաթը մի կամ երկու անգամ տալ նաև

տաք կերակուրք Քաղաքներում տալ դրամ մինչև 2 շունչը՝ շնչին 15 կոպ., մինչև 5 շունչը՝ շնչին 10 կոպ., իսկ 5-ից բարձր 8 կոպ.։

2. Ժողովս ընդունելով՝ որ անմիջապէս հարկաւոր է կազմուած բլանկներով վիճակագրական տեղեկութիւններ հաւաքել, որոշեց այդ գործի կազմակերպութիւնը յանձնաբարել Տ. Տ. Խորէն, Բագրատ, Մատթէոս եպիսկոպոսներին և Տ. Բարգէն վարդապետին։

Միաժամանակ ժողովը ցանկալի համարեց, որ վիճակագրութիւնը սկսուի ամեն տեղ միենոյն օրը և աշխատել, որ նշանակեալ օրը տեղերում լինեն թէ վիճակագրողները և թէ թերթերը։

3. Ժողովը ցանկալի համարեց, որ տեղերում շրջիկների և տեղական Եղբայրական Օգնութեան Հոգաբարձութեանց միջոցով կազմուին ցուցակներ, թէ որ ընտանիքներին ի՞նչ անհրաժեշտ է տալ։ Այլ և ժողովը ցանկալի համարեց հագուստների և անկողինների պահեստներ ունենալ ս. Էջմիածնում և Երևանում, պատրաստել տալով որոշքանակութեամբ հագուստներ, անկողին, գուլբա, չստեր և այլն։

4. Ժողովը ուշադրութեան առնելով այն հանգամանքը, որ գաղթականների մէջ հիւանդներ շատ կան, ցանկալի համարեց ունենալ շրջիկ բժիշկներ և ֆելդշերներ, ուստի և պարտաւորութիւն դրեց Կարգադիր Յանձնաժողովի վրայ լրագրական յայտարարութեամբ բժիշկներ և ֆելդշերներ հրաւիրել։

5. Ժողովը ցանկալի համարեց, որպէս փորձ, որոշ տեղերում բաղնիքներ պատրաստել. անկախ սրանից յարմար և անհրաժեշտ համարուեց իւրաքանչիւր շնչին տալ ամսական <sup>1/4</sup> ֆունտ սապոն։

6. Ժողովը ինկատի առնելով, որ Երևանում բացուած է որբանոց, որ Նախիջևանում եղած որբերն էլ պատապարուած են այնտեղ, ցանկալի համարուեց, որ նման որբանոց ևս բացուի ս. Էջմիածնում և այլ կենդրոնական տեղերում և որ բոլոր որբանոցները կապ պահպանեն որ-

պէսզի որդեկորոյս ծնողները հեշտութեամբ կարողանան գտնել իրենց դաւակներին։ Իրաւունք տալ որբանոցի վարչութեանը փոքրահասակ որբերին յանձնել ի պահպանութիւն վստահելի ընտանիքներին այն պայմանով, որ երբ Վարչութիւնը պահանջէ նրանցից անմիջապէս վերադարձնեն։

Ժողովը ցանկալի համարեց, որ Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովները տեղական ուսուցիչների յատուկ մարմին կազմեն, որոնց վրայ պարտականութիւն դնեն հոգալու որբերի կրթութեան և դաստիարակութեան մասին։

Միաժամանակ Ժողովը հարկաւոր համարեց շրջաբերականներով պարտաւորեցնել գիւղական ուսուցիչներին պարապմունքներ կազմակերպել գիւղերում ապաստանած գաղթականների երեխանների համար։

7. Ժողովը ցանկալի համարեց, որ գաղթականների ծնուածների, մեռածների և պսակուղների մասին հարկաւոր արձանագրութիւնները մացնեն տեղական քահանաներն այն ընդհանուր մատեանների մէջ, որոնք հոգևոր իշխանութեան կողմից տրուած են ամեն մի եկեղեցու, ցանկալի համարուեց նաև, որ ամեն մի գիւղի եկեղեցու անունով տրուեն առանձին փոքրիկ մատեաններ, որոնց մէջ արձանագրուեն միմիայն նոյն գիւղում ապաստանած գաղթականների ծնունդը։

8. Ժողովը որոշեց համագումարն անպատճառ կազմակերպել համաձայն Նորին Վ. Ենախառութեան 1914թ. դեկտ. 28-ի որբատառ Կոնդակի Դ-րդ կէտի, որպէսզի հսարաւոր լինի լուծումն տալ գաղթականների վերաբերեալ մի շարք այլ և այլ խնդիրների, ներկայութեամբ գլխաւոր տեղերի Յանձնաժողովների ներկայացուցիչների։

Այս որոշումները վաւերացրել են՝ նախագահ Ժողովի՝ Եփրեմ Եպիսկոպոս, անդամներ՝ Բագրատ Եպիսկոպոս, Բարգէն և Վրթանէս վարդապետներ, Գրիգոր Տէր Խաչատրեան, Սմբատ Խաչատրեան, Մկրտիչ Մուսինեան և անդամ-քարտուղար՝ Խորէն Եպիսկոպոս։

Բարգէն վարդապէս

(Նարունակելի)